

ԳԻՏԱԿԱՆ ՆՄՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ
ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՊԵՐԻՆ

1962 թ. նոյեմբերի 23—26-ր Կիևում աւելովում տեղի ունեցավ Հայկական և Ուկրաինական ՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտների և Լվովի Հասարակական գիտությունների ինստիտուտի գիտական երկրորդ նստաշրջանը՝ նվիրված Հայ և ուկրաինական ժողովուրդների բարեկամությանն ու պատմական կապերին: Նստաշրջանում լսվեց 26 զեկուցում և հաղորդում. որոնք վերաբերում էին բազմազան հարցերի և բնագրերում ավելի քան հազարամյա մի ժամանակամիջոց սկսած Կիևյան Ռուսիայի պատմությունից մինչև մեր օրերը: Դրանք մի մասը աղբյուրագիտական ու պատմագիտական բնույթ ունեւ, մի զգալի մասն էլ փաստական նյութի հետազոտման հիման վրա գրված աշխատանքներ էին, որոնք շոշափում էին Հայաստանի իշխանության տակ գտնված արեւմտաուկրաինական շրջանների երբեմնի հայկական գաղթավայրերի սոցիալ-տնտեսական, իրավական և քաղաքական դրությունն առնչվող այլևայլ հարցեր: Ըստ բովանդակության այդ զեկուցումներն ու հաղորդումները կարելի է խմբավորել մոտավորապես հետևյալ կերպ.

1. Հայ և ուկրաինական ժողովուրդների բարեկամությունը և կուլտուր-տնտեսական համագործակցությունը Սովետական իշխանության տարիներին:
2. Լվովի հայկական գաղութը:
3. Ուկրաինայի հայկական այլ գաղթավայրերը միջնադարում:
4. Հայ-ուկրաինական պատմական կապերը:
5. Հայկական աղբյուրները Ուկրաինայի մասին և ուկրաինական հեղինակներն ու արխիվային նյութերը հայկական գաղթավայրերի մասին:

Սովետական ժամանակաշրջանում հայ-ուկրաինական կապերն և բարեկամությանը նվիրված զեկուցումներն ու հաղորդումներն բնագրերում էին հասարակական կյանքի գանազան

բնագաղափարներ և պատմում եղբայրական երկու ժողովուրդների տնտեսական, կուլտուրական ու ռազմական համագործակցության և փոխադարձ օգնության մասին: Փաստական նյութի լուսաբանմամբ զեկուցողները ցույց տվեցին, որ երկու եղբայրական ժողովուրդների բարեկամությունն ու տնտեսական-կուլտուրական համագործակցությունը, շնորհիվ Սովետական կառավարության լենինյան ազգային քաղաքականության, բոլորովին նոր բնույթ է ծավալ են բնդունել և խարսխված են այն բնդհանուր խնդրի վրա, որ իրենց առջև դրել են մեր երկրի բոլոր ժողովուրդները կոմունիստական հասարակարկ կառուցելու ճանապարհին:

Պատմական գիտ. դոկտոր Ա. Բ. Հաբուրյունյանը և պատմ. գիտ. թեկնածու Մ. Բ. Ուղումյանը ներկայացրել էին «Հայ և ուկրաինական ժողովուրդների բարեկամությունը կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում» զեկուցումը, որտեղ ցույց էին տվել, որ հայ և ուկրաինական ժողովուրդների բարեկամությունը կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում իր լայն արտացոլումն է գտնում երկու սեպուրիկաների թե տնտեսական, և թե՛ կուլտուրական կյանքի ասպարեզներում: Զեկուցողները բերեցին մի շարք հետաքրքրական փաստեր Հայաստանի և Ուկրաինայի արդյունաբերական ձեռնարկությունների, կոլտնտեսությունների, ինչպես նաև ստեղծագործական գանազան կոլեկտիվների փոխադարձ օգնության և համագործակցության վերաբերյալ:

Երկրի պայմաններում հայ և ուկրաինական ժողովուրդների տնտեսական համագործակցության հարցին էր նվիրված պատմ. գիտ. թեկնածու Գ. Ի. Կովալչակի և Ուկրաինական ՍՍՌ ԳԱ Տեխնիկա-տնտեսական խորհրդի գիտական բարտուղար Պ. Պ. Սեմիլետովի «Լվովի և Ստանիսլավի ժողանտիտոհների տնտեսական կապերը Հայկական ՍՍՌ-ի հետ» հաղորդումը: Նշելով հայ և ուկրաինական ժողովուրդների տնտեսական կապերի բազմադարյան պատմու-

1 Առաջին նստաշրջանի մասին տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1959, N 4:

թյունը, նրանք իրավամբ բնագծեցին, որ Սովետական Ռեկրահայի հետ վերամիավորվելուց հետո (1939) արեւմտաուկրաինական շրջանների (ավյալ գեպրում Լվովի և Ստանիսլավի շրջանների) համար եւ այդ կապերը սկզբունքորեն նոր բնույթ ստացան և հենվում են Սովետական Միության անսկզբնական միասնության, աշխատանքի համամիութենական բաժանման և տրնտեսական առանձին շրջանների մասնագիտացման վրա:

«Սովետական իշխանության տարիներին հայ-ուկրաինական մշակութային կապերի պատմությունը» խորագիրը կրող գեկուցման մեջ պատմ. գիտ. թեկնածու Գ. Մ. Շեշուկը հանգամանորեն բնութագրեց Հոկտեմբերյան ռուսացիայից հետո ստեղծված այն բարենպաստ պայմանները, որոնց շնորհիվ սովետական բուրժուազուգները կուլտուրական ծաղկում են ապրել և ստացել են փոխադարձ շփման և բարերար ազդեցության հնարավորություններ: Նա բերեց շատ փաստեր Սովետական իշխանության տարիներին Ուկրաինայի և Հայաստանի միջև հաստատված կուլտուրական կապերի վերաբերյալ:

Բանասիրական գիտ. թեկնածու Լ. Կիրչևը իր գեկուցման մեջ նշեց այն մեծ ժողովրդայնությունը, որ վայելում են հայ գաղական և ժամանակակից գրողները Լվովի աշխատավորների շրջանում: Երա ապացույցներից է այն փաստը, որ Լվովի ամենախոշոր արդյունաբերական ձեռնարկությունում՝ «Լվովսեմաշում» գործող գրական ստուգիան կրում է հայ մեծանուն բանաստեղծ Լ. Թումանյանի անունը: Այս ստուգիայի անդամները, որոնք մշտական կապ են պահպանում Հայկական ՍՍՌ Իջևանի շրջանի Շեշուկոյի տնական գրական խմբակի հետ, իրենց բազմաթիվ «Լվովսեմաշիվեց» թերթում պարբերաբար տպագրում են հայ հեղինակների գործերից:

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Ուկրաինայի պարտիզանական շարժման մեջ հայերի ունեցած մասնակցության մասին գեկուցեց պատմ. գիտ. թեկնածու Յ. Մ. Խալիլյանը: Փաստական նյութերի հիման վրա նա ցույց տվեց, որ Ուկրաինայում գերմանա-ֆաշիստական զորքերի դեմ ծավալված պարտիզանական պայքարին ՍՍՌ-ի մյուս ժողովուրդների հետ միասին իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել նաև հայ ժողովրդի գավակները: Հատկանշական է Սովետական Միության կրկնակի հերոս, գեներալ-մայոր Կովալի և գեներալ Թուդենի պարտիզանական միավորումների մեջ մտած հայ պարտիզանների գործունեությունը Արևմտյան Ուկրաինայի մարզերում և Կարպատներում, ինչպես

նաև հայ ամենախոշոր պարտիզանական ջոկատի՝ Ա. Ի. Միկոյանի անվան ջոկատի գործունեությունը Ուկրաինայի տերիտորիայում:

Պատմ. գիտ. գոկտոր Ա. Ն. Մնացականյանը հանդես եկավ «Ուկրաինական ժողովրդի գավակները Կովկասում սոցիալիստական ռուսացիայի հաղթանակի համար մղված պայքարում» գեկուցմամբ: Դեռևս 1918 թ. բազմաթիվ ուկրաինացի զինվորներ Կովկասյան բանակի շարքերում ակտիվ մասնակցություն են ցուցաբերում թուրքական օկուպանտների դեմ մղված պայքարին, իսկ ավելի ուշ, արդեն 1920 թ. հեռուսական Կարմիր Բանակի շարքերում հաղաթափոր ուկրաինացիներ մարտնչում են Ազրբեջանում, Հայաստանում և Վրաստանում Սովետական իշխանության հաստատման համար, անձնվիրաբար օգնում տեղի աշխատավորներին՝ շահագործողների դեմ նրանց մղած պայքարում:

Սրանք էին սևախոյով ըննարկված այն գեկուցումներն ու հաղորդումները, որոնց մեջ բուսարանվեցին հայ և ուկրաինական ժողովուրդների բարեկամությունն ու կուլտուր-տրնտեսական համագործակցությունը Սովետական իշխանության տարիներին:

Վերջին մի բանի տարիների ընթացքում Ուկրաինական ՍՍՌ-ի ԳԱ ակադեմիկոս Ի. Պ. Կրիպյակևիչի գեկավարությամբ երիտասարդ գիտական աշխատողների մի խումբ գրադրում է Լվովի հայկական գաղութի պատմության գանազան հարցերով: Այդ հարցերը լուսարանելու համար նրանց հարուստ նյութ է մատակարարում Լվովի Պետական կենտրոնական արխիվը, որտեղ հայկական գաղութին վերաբերող բազմաթիվ և բիշ ուսումնասիրված նյութեր կան: Նստաշրջանում լաված ու ըննարկված գեկուցումների մի զգալի մասը վերաբերում էր Լվովի հայ գաղութի պատմությանը:

Գիտական մեծ հետաքրքրություն էր ներկայացնում ակադեմիկոս Ի. Պ. Կրիպյակևիչի «XIV—XV դարերի Լվովի հայկական գաղութի սկզբնավորման հարցի շուրջ» թեմայով գեկուցումը, որը բարձրացրեց մի շարք կարևոր հարցեր՝ կապված Լվովում հայերի հաստատման, նրանց գրադմունքների և իրավաբանական վիճակի հետ: Հենվելով XVII դարի Լվովի պատմաբաններ Իվ. Արնպեկի և Ի. Վ. Զիմորովիչի հաղորդած տվյալների վրա, Ի. Պ. Կրիպյակևիչը հավաստի համարեց այն միաբար, թե հայերը Լվովում սկսել են հաստատվել XIII դարի երկրորդ կեսից: Ընդ որում, գեկուցողի կարծիքով հայերը Լվով են եկել ոչ թե

2 Ի. Պ. Կրիպյակևիչի գեկուցումը տպագրվում է «Հանդեսի» այս համարում:

ուղղակի իրենց հայրենիքից, այլ թաթարների իշխանություն տակ գտնված երկրներից, մասնավորապես Ղրիմից, Զեկուցողը մասնանշեց քաղաքի այն մասը, որտեղ առաջին անգամ հայերը բնակություն էին հաստատել. դա քաղաքի կենտրոնն էր, Պոդգամչեն, որ հիմնադրել էին Գալիցիայի իշխանները: Ինչպես ցույց տվեց Պ. Ի. Կրիպյակևիչը, լեհական տիրապետության շրջանում, 1360 թ. հայերի մի մասը տեղափոխվում է քաղաքի նոր մասը. այստեղ նրանք առանձին թաղամաս են ստանում, որը մինչև օրս էլ կոչվում է Հայկական փողոց: Բ. Պ. Կրիպյակևիչը կանգ առավ հայերի սնունդական վիճակի վրա միջնադարյան Լվովում: Հակառակ մի շարք հեղինակների, որոնք հայ գաղթավայրերի բնակչության հիմնական զբաղմունքը համարում են սոսկ առևտուրը, Կրիպյակևիչը, նենվելով փաստական հարուստ նյութի վրա, ցույց տվեց, որ Լվովի հայերի մեծամասնությունը զբաղված է եղել արհեստագործությամբ, բնդ որում ամենատարածված արհեստներից էին կաշվեմշակությունը և մետաղագործությունը: Արհեստների հետ միասին հայերը զգալի մասնակցություն են ունեցել նաև առևտրի մեջ, հանդիսանալով Արևելքի հետ կառավարող առևտրի միջնորդներ: Անդրադանով Լվովահայերի իրավաբանական վիճակին, Պ. Բ. Կրիպյակևիչը նշեց, որ նրանք կազմել են առանձին համայնք, ունեցել են իրենց վոյթը (վարչապետը), ավագների խորհուրդը և օգտվել են հայկական իրավունքից:

Պատմ. գիտ. թեկնածու Ս. Տ. Ռիլեգլին հանգես եկավ «Լվովահայերի պայքարը ունիայի և Վատիկանի դեմ» գեկուցումով: Նա լուսարանեց այն համառ պայքարը, որ XVII դարի 30—60-ական թվականներին մղել են Լվովի հայերը բնդդեմ կաթոլիկացման, ինչպես նաև այն պաշտպանությունը, որ նրանց ցույց է տվել տեղի ուկրաինական բնակչությունը:

Լվովի պատմական թանգարանի աշխատակից Ն. Ա. Կրիվոնոսի հաղորդումը բնդդրված էր Լվովահայ պատմության սակավ ուսումնասիրված կողմերից մեկը. դա XVII դարի առաջին կեսին արևմտաուկրաինական շրջանների առևտրի զարգացման մեջ Լվովի հայկական գաղութի ունեցած գերի լուսառանման և զնահաման հարցն էր: Ընդգծելով տարանջիկ առևտրի մեջ Լվովի հայ վաճառականների կատարած դերը, Ն. Ա. Կրիվոնոսը միաժամանակ ցույց տվեց, որ հայերի կողմից Լվով բերված ապրանքների միայն մի մասն էր վաճառվում քաղաքում, իսկ հիմնական մասը վաճառքի էր տարվում այլ վայրեր, այդ թվում նաև Արևմտյան Ուկրաինայի այլ շրջաններ, որտեղ գոյություն ունեցած հայկական գաղթավայրերի հետ

Լվովահայերը առևտրական սերտ կապեր էին պահպանում: Արևելքային նյութերի հիման վրա Ն. Ա. Կրիվոնոսը լուսարանեց առևտրական այն կապերը, որ ունեցել են Լվովի հայ վաճառականները Կիևի, Չիգրինի, Բելայա Ցերկովի, Զաոլավի, Օստրոգի և ուկրաինական այլ քաղաքների հետ: Նա շեշտեց Մոսկվայի, Վլադիմայի, Սմոլենսկի և ռուսական այլ քաղաքների հետ առևտուր կատարող Լվովահայ վաճառականության դերը Ռուսաստանի ու արևմտաուկրաինական շրջանների տնտեսական կապերն ամրապնդելու գործում: Զեկուցողը խոսեց նաև այն մասին, որ Լվովի հայ բնակիչները արհեստների, արտաքին ու ներքին առևտրի մեջ ունեցած իրենց մասնակցությամբ նպաստում էին քաղաքների և շուկայական կապերի զարգացմանը:

Լվովի համալսարանի դոցենտ Վ. Ս. Կուլչիցկու հաղորդումը նվիրված էր Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» կիրառմանը: Լվովում: Զեկուցողը բազմաթիվ փաստերով ցույց տվեց, որ տեղի հայկական դատարանները իրենց պրակտիկ գործունեության ընթացքում ղեկավարվել են Գոշի «Դատաստանագրքով», հաշվի առնելով, իհարկե, տեղական պայմանների առանձնահատկությունները: «Դատաստանագրքը» թարգմանվել է լատիներեն և 1519 թ. մարտի 5-ին հաստատվել Լեհաստանի թագավորի կողմից: «Հայկական ստատուտ» վերաբերյալ: Ավելի ուշ՝ 1601 թ., «Հայկական ստատուտը», այսինքն Գոշի «Դատաստանագրքը», թարգմանվում է նաև լեհերեն: Զեկուցողը նշեց, որ կարևոր նշանակություն տալով «Դատաստանագրքին», Լվովի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ղեկանավոր ուսանողներին նրա հետ ծանոթանելու համար հատուկ ժամեր է հատկացրել:

Փիլիսոփ. գիտ. դոկտոր Վ. Ա. Չալոյանի գեկուցումը նվիրված էր XVII դարի հայ փիլիսոփայական մտքի աչքի բնկնող ներկայացուցիչ Ստեփանոս Լվովդուն (Լեհացուն), Շարադրելով Լվովցու կամերի ու գործունեության հիմնական դրվագները, գեկուցողը բնութագրեց նրա փիլիսոփայական հայացքները և նշեց նրա դերը մի շարք աշխատությունների (առ թվում նաև Արիստոտելի «Մետաֆիզիկայի») թարգմանության գործում:

«Ուկրաինայի հայերի մասնակցությունը հայ ազատագրական պայքարին» թեմայով գեկուցում կարդաց պատմ. գիտ. թեկնածու Վ. Ա. Ոսկանյանը: Հեմք բնդունելով արևելային նյութեր, նա ցույց տվեց, որ Լեհաստանի իշխանության տակ գտնվող Արևմտյան Ուկրաինայի հայերը ևս անտարբեր չեն եղել դեպի հայ ժողովրդի ազատագրական պայքարը բնդ

դեմ թուրքական և պարսկական տիրապետության՝ Վ. Ոսկանյանը նշեց, որ հայ ազատագրական խմորումներին Ուկրաինայում ապրող հայերի ունեցած մասնակցությունը ավելի և աշխուժացել XVI—XVIII դարերում: Այդ հաստատելու համար Վ. Ս. Ոսկանյանը բերեց մի շարք փաստեր:

Լվովի հայ գաղութի պատմությունից դառնալով, գիտական սեփայլում գեկուցումներ ու հաղորդումներ լսվեցին նաև Ուկրաինայի մյուս հայ գաղթավայրերի մասին: Պատմ. գիտ. թեկնածու Բ. Ս. Միշկովի հաղորդումը նվիրված էր «Մի քանի տեղեկություններ Կիևի հայերի կյանքից XV—XVI դդ.» թեմային, որը գրականության մեջ դրեթե չի ուսումնասիրված: Հաղորդման մեջ բերվեցին մի շարք նոր ու հետաքրքիր փաստեր: Զեկուցողը նույնիսկ ձեռնեց, թե Կիևի որ մասում էր գտնվում հայ գաղութը: Երա ասելով՝ հայերի տները գտնվում էին ժիտնի շուկայի շրջանում, Շչեպիցկի բարձունքի տակ: Անդրադառնալով Կիևի հայության գրադմունքներին, Գ. Ս. Միշկովը շեշտեց գրանցից հիմնականում երկուսը՝ արհեստներն ու առևտուրը: Կիևի հայերի մեջ եղել են նաև աշակերտներ ու երկրագործներ, որոնք ունեցել են խաղողի այգիներ, արտեր և խոտհարքներ: Կիևի հայերից ոմանք օգտվել են Մագդերուդյան իրավունքից և գտնվել քաղաքային մագիստրատի իրավասության տակ: Կիևում ապրած հայերը միավորված են եղել եղբայրության մեջ, որի օգնությամբ պաշտպանել են իրենց տնտեսական ու քաղաքական իրավունքները:

Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղութներից մեկի՝ Մնյատինի հայ գաղութի մասին հաղորդում արեց պատմ. գիտ. թեկնածու Վ. Վ. Գուարովեզկին: Հին ուկրաինական այս քաղաքում հայերը սկսում են բնակություն հաստատել դեռևս XVI դարում. 1628 թ. լեհական թագավորի կողմից Մնյատինի հայերին տված առանձնաշնորհումով՝ դրվում է տեղի հայ գաղութի սկիզբը: Զեկուցողը համառոտակի բուսաբանեց գաղութի սոցիալ-տնտեսական և իրավական վիճակը: Արժարձելով Մնյատինի հայերի իրավա-սոցիալական վիճակը, զեկուցողը, հենվելով 1628 թ. առանձնաշնորհման վրա, նշեց, որ նրանք ունեցել են նույն ինքնավարությունը, որպիսին ունեին Լվովի հայերը: Գալիցիան լեհասերիալի կողմից գրավվելուց հետո հայերը աստիճանաբար կորցնում են իրենց առանձնաշնորհումները, և Մնյատինի հայ գաղութը փաստորեն վերանում է:

Ցաղլովեց, Կամենեց-Պոդոլսկ, Տիսմենիցա և Լեհաստանի գերիշխանության տակ գտնված ուկրաինական այլ վայրերում հաստատված

հայությունը իր գոյության ընթացքում առաջ է քաշել հասարակական կազմակերպության զանազան ձևեր: Դրանցից մեկի՝ «կաթիճվորաց եղբայրությունների» գործունեության մասին զեկուցեց պատմ. գիտ. թեկնածու Վ. Ս. Գրիգորյանը: Քաղաքային աշխատավոր երիտասարդական այդ կազմակերպությունների նպատակը համարելով տնտեսական օգնության և համագործակցության հիման վրա՝ ճշողների զեմ միասնական պայքար մղելը, Վ. Ս. Գրիգորյանը ցույց տվեց, որ այդ կազմակերպությունները ընդհանուր շատ բան ունեին Հայաստանում գոյություն ունեցած նման եղբայրությունների հետ: Զեկուցողը այդ հաստատեց՝ համեմատելով ուկրաինական Ցաղլովեց քաղաքի 1646 թ. և ռումինական Բուտուշանի քաղաքի 1690 թ. հայ «կաթիճվորաց եղբայրությունների» կանոնադրությունները՝ Երզնկայի «եղբայրության» 1280 թ. «կանոնադրության և կանոնների» հետ: Նա հատուկ ուշադրություն դարձրեց Տիսմենիցա քաղաքի հայ գաղութի «եղբայրության» արձանագրական հիշատակարանների վրա, որոնք պահպանվում են Ուկրաինական ՍՍՌ Լվովի կենտրոնական պետական արխիվում, բայց որոնք մինչև օրս տակավին չեն ուսումնասիրված:

Հայ գաղթօջախների մեջ թե բնակչության քանակով և թե կուլտուր-տնտեսական գերովուրույն տեղ է գրավում դրիմահայ գաղութը, որի առաջացման էր նվիրված պատմ. գիտ. թեկնածու Վ. Միխայելյանի «Երբ և ինչպե՞ս է սկզբնավորվել դրիմահայ գաղութը» թեմայով զեկուցումը: Հայ և օտար աղբյուրների վկայությունների համեմատությամբ զեկուցողը ցույց տվեց, որ արդեն XI դարում Ղրիմում գոյություն ունեցող հայ մշտական բնակչություն, որը XI—XIII դարերում աշխույժ մասնակցություն էր ցուցաբերում սևծովյան ավազանի առևտրին:

Հայ-սլավոնական հնամենի կապերին էր նվիրված Հայկ. ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ս. Տ. Նեմյանի զեկուցումը «Պատմա-աշխարհագրական մի քանի գուգահեռներ «Ժամանակագրական տարեգրության» և Հոհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» միջև» թեմայով: Զուգահեռ անցկացնելով այդ երկու աշխատությունների միջև, որոնցից մեկում պատմվում է Կիևի հիմնադիր երեք հղբայրների, իսկ մյուսում՝ Տարոնում երեք քաղաքներ հիմնադրած երեք եղբայրների մասին, Ս. Տ. Նեմյանը նշեց այդ տարեգրություններում հիշատակվող անունների նմանությունը և առաջ քաշեց հին ռուսականի վրա հայկականի ունեցած ազդեցության հնարավորության հարցը, որովհետև «Տարոնի պատմությունը» վերագրվում է ոչ ուշ,

քան VIII դարին, մինչդեռ «Ժամանակագրական տարեգրությունը» գրվել է XII դարի սկզբներին՝ 1113 թ.:

Պատմ. գիտ. թեկնածու Մ. Յու. Բալայանին իր «Կիևյան Ռուսիայի կազմավորման շրջանում հայ-ուսական կապերի հարցի շուրջը» հաղորդման մեջ փորձեց մի փոքր այլ հիմնավորում տալ «Տարոնի պատմության» և Կիևի հիմնադրման մասին վերահիշյալ կիսաթղթերի դարավանդության միջև եղած նմանությունը և այդ առումով՝ VI—VIII դարերի հայ-սլավոնական շփումներին: Նա գտնում է, որ «Տարոնի պատմության» և Կիևի հիմնադրման մասին ավանդության մանրամասն ուսումնասիրությունը կարող է հանգեցնել այն եզրակացություն, թե մեր թվագրության I հազարամյակի երկրորդ կեսերին տեղի են ունեցել հայ-սլավոնական շփումներ, հետևապես նաև փոխադրեցություն մոմենտներ:

Հայ-ուկրաինական կապերը XV—XVIII դարերում լուսարանում էին գտել պատմ. գիտ. թեկնածու Յա. Գ. Բալեիչի գեկուցման մեջ: Զեկուցումը հիմնականում վերաբերում էր Ուկրաինայում ապրած հայերի և ուկրաինացիների միջև եղած կապերին: Զեկուցողը հատկապես կարևոր տեղ հատկացրեց ընդհանուր թշնամու՝ կաթոլիկացման քաղաքականության դեմ հայ և ուկրաինացի աշխատավորների մղած պայքարին և հայ-ուկրաինական անտեսական ու մշակութային կապերին:

Հայ-ուկրաինական կապերն ու բարեկամությունը, որոնք դարերի պատմություն ունեն, արտահայտություն են գտել հասարակական կյանքի տարրեր բնագավառներում: Այդ կապերի ցայտուն արտահայտություններից մեկն էլ հայերի համակրանքն էր դեպի ուկրաինական կազակությունը, նրանց՝ մասնակցությունը կազակային զորքերի զործողություններին: Այդ թեմայով հաղորդում արեց պատմ. գիտ. թեկնածու Ն. Պ. Շեչնենկոն: Արխիվներում պահպանված կազակային զորքերի ցուցակների ուսումնասիրության հիման վրա նա ցույց տվեց, որ հայերը եղել են ոչ միայն շարքային կազակներ, այլև զինվորական աստիճանավորներ:

Նախառնություն շրջանի հայ իրականության մեջ դեպի Տարաու Շևչենկոյի ստեղծագործությունն ունեցած հետաքրքրությանն էր նվիրված Ֆիլ. գիտ. թեկնածու Վ. Ն. Շուր-բավսկու գեկուցումը: Զեկուցողը մասնավորապես կանգ առավ այն արձագանքների վրա, որոնք տեղ են գտել հայ մամուլի էջերում՝ Ուկրաինայի ազգային մեծ բանաստեղծի մահվան 50-ամյակի կապակցությամբ:

Նույնաշրջանին ներկայացված էին նաև աղբյուրագիտական բնույթի երեք գեկուցում և մեկ հաղորդում: Հայկական ՈՍԽ ԳԱ թղթակիցանդամ Լևոն Մելիքսեյ-Բեկը իր «Հայ աղբյուրները հերոսների մասին» գեկուցման մեջ ի մի էր հավաքել բոլոր այն նյութերը, որ պահպանել են հայկական աղբյուրները Տավրիկյան հերոսների մասին (վարբարանական, նահատակագրական աղբյուրներ, X—XI դարերի հայ պատմիչ Ասողիկի «Պատմություն տիեզերական» գործը և այլն): Միաժամանակ, Հայաստանի և հերոսների միջև եղած կապը ցույց տալու համար պրոֆ. Լ. Մելիքսեյ-Բեկը կատարեց հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված զանազան նյութերի հիմնավոր համեմատություններ:

Պատմ. գիտ. թեկնածու Վ. Ա. Հակոբյանը «Հայ աղբյուրները ուկրաինական քաղաքների մասին» թեմայով գեկուցման մեջ կանգ առավ ուկրաինական քաղաքներում ապրած հայ հեղինակների ժամանակագրություններում, հիշատակարաններում, օրագրերում և ճանապարհորդական նոթերում այդ առթիվ եղած տեղեկությունների վրա: Ժամանակագրական առումով ուկրաինական քաղաքների մասին հայ հեղինակների վկայությունները ընդգրկում են XV դարից մինչև XIX դարի 30-ական թվականները:

Լվովի սլավոնական արխիվի գիրեկտոր Ն. Ֆ. Վրադին իր հաղորդման մեջ հանգամանորեն պատմեց Լվովի արխիվի վավերագրական մատյանների մասին, որոնք կարևոր աղբյուր են Ուկրաինայի հայ գաղութները ուսումնասիրելու համար: Հայ գաղութների մասին Ուկրաինական ՈՍԽ Լվովի կենտրոնական պետական պատմական արխիվում պահպանված փաստաթղթերը գետնից վաճառված են քաղաքային և ինքնավարական դատարանների վավերագրական մատյաններում, Լվովի հայկական կոնսիստորիայի գործերում և Արևմտյան Ուկրաինայի այն քաղաքների վավերագրական մատյաններում, որտեղ ապրել են հայերը: Ն. Ֆ. Վրադին հատկապես նշեց հայ համայնքի դատական գործերի կարևորությունը: Ընդգրկելով զրեթե 250 տարվա ժամանակամիջոց (1537—1783), հայկական դատարանի գործերն ունեն բազմազան բնույթ և արտացոլում են Արևմտյան Ուկրաինայի հայ գաղթավայրերի տնտեսական, քաղաքական և հոգևոր կյանքը: Եւայց հայ համայնքների մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում նաև ոչ հայկական դանազան դատարանների գործերը, որոնց մեջ գետնից վաճառված են հայերի բողոքներն ու դանդաղանքները: Ահա թե ինչու, ինչպես իրավա-ցիրեն գտնում է Ն. Ֆ. Վրադին, կարևոր է նաև այդ դատարանների գործերի ուսումնասիրությունը, որովհետև դրանք մեծապես կօ-

ժանդակեն տեղի հայտնության պատմության ուսումնասիրմանը: Բացի Հվովի մագիստրատը վավերադրային մատյաններից, հայկական բնակավայրերի մասին արժեքավոր նյութեր են պարունակում նաև Ստանիսլավի, Տերերովի, Գալիչի, Բրոդի և այլ բաղադրների մագիստրատների նյութերը:

Հվովի հասարակագիտական ինստիտուտի աշխատակից Յա. Ռ. Գաշկինը՝ ղեկուցում կարգաց «Ուկրաինայի պատմագրության ներդրումը Ուկրաինայի հայկական գաղութների ուսումնասիրման մեջ» թեմայով: Կանգ առնելով տարբեր դպրոցների և ուղղությունների մի քանի տասնյակ ուկրաինացի պատմաբանների գործերի վրա, Յա. Ռ. Գաշկինը լուսարանեց այն նշանակալից աշխատանքը, որ տեղի հայ գաղութների պատմության ուսումնասիրության ասպարեզում կատարել են ուկրաինացի գիտնականները ինչպես անցյալում, այնպես էլ սովետական ժամանակաշրջանում:

Հայ և ուկրաինական ժողովուրդների պատմական կապերին և եղբայրական բարեկամությանը նվիրված գիտական երկրորդ նստաշրջանը իր վերջին նիստում բնորոշեց մի շարք որոշումներ, որոնք ուղղված էին գիտա-հետա-

գոտական համատեղ աշխատանքները հետագայում էլ ավելի ակտիվացնելու և գործնական դարձնելու նպատակին: Սեփայի մասնակիցները որոշեցին առաջիկայում գումարել հայ-ուկրաինական պատմական կապերին նվիրված երրորդ գիտական նստաշրջանը: Նախատեսվում է դրան մասնակից դարձնել նաև միջին-հասկան ռեսպուբլիկաների և ժողովրդական դեմոկրատիայի երկրների պատմաբաններին: 1963 թ. գումարվելու է կոորդինացիոն խորհրդակցություն, որը քննարկելու է հայ-ուկրաինական կապերի ուսումնասիրման վիճակը և «Ուկրաինայում հայկական գաղթավայրերի պատմության» պրոսպեկտը: Այդ աշխատությունը ստեղծվելու է հայ և ուկրաինացի գիտնականների համատեղ ջանքերով: Նախատեսվում է նաև հայ-ուկրաինական արխիվային աշխատողների օգնությամբ հրատարակել փաստաթղթերի ժողովածուներ: Ուկրաինայում պետք է հրատարակվի տեղի հայկական գաղութներին նվիրված ժողովածու, իսկ Հայաստանում՝ «Հայկական աղբյուրները Ուկրաինայի մասին» ժողովածու:

Թ. ՊԱՂՈՍԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՆԻՍՏ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԿՐՈՒԹՅԱՆ 450-ԱՄՅԱԿԻՆ

1962 թ. դեկտեմբերի 25-ին Մաշտոցի անվան Մատենադարանի նիստերի ղաջիճում տեղի ունեցավ գիտական նիստ՝ նվիրված հայկական տպագրության 450-ամյակին:

Մատենադարանի գիրեկտոր, պատմ. գիտ. դոկտոր Առն. Խաչիկյանը բացելով նստաշրջանը կանգ է առնում այն վճռական նշանակության վրա, որ ունեցել է տպագրությունը հայ մշակույթի պահպանման ու զարգացման գործում: XVI դարը շատ ծանր է եղել Հայաստանի համար: Դարամուտրին սկիզբ են առնում Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Բրանի միջև մղվող արյունալի պատերազմները: Ահա այդ ժամանակ էր, որ հեռավոր Վենետիկում սկիզբ է առնում հայկական տպագրությունը, որը այնուհետև ամենադժվարին պայմաններում հետդհետև զարգանում է: Սակայն հայ ժողովուրդը, որ միջնադարի մոռյլ պայմաններում գերմարդկային ճիգեր էր գործադրում գրավոր իր մշակույթը պահպանելու և զարգացնելու համար, իսկապես դրքի տեր դարձավ միայն մեր օրերում:

Առաջին ղեկուցումը՝ «Հայկական տպագրության 450 տարին», կազմեց բանասիրական գիտ. թեկնածու Արամ Բաբայանը:

Մատենադարանի գիտաշխատող Ռաֆայել Խաչանյանի ղեկուցումը նվիրված էր հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտի անձին և գործունեության հարցերին: Մի շարք հայտնի ուսումնասիրություններից բերված բաղվածքներով ղեկուցողը ցույց տվեց, որ բանասերները սահմանափակվել են Հակոբ Մեղապարտի մասին սոսկ տարբեր ենթադրություններ անելով, բանի որ նրա վերաբերյալ եղած միակ գրավոր տեղեկություններ շատ հակիրճ է: Այդ ենթադրություններից մեկն այն է, որ Հակոբը եղել է վաճառական և շահ ստանալու նպատակով հայերեն գրքեր է պատվիրել իտալական մի տպարանում: Հապճեպորեն արված այդ ենթադրությունը անցնելով գրքից-գիրք և հողվածից-հողված՝ դարձել է ամենատարածվածը: Զեկուցողը բազմաթիվ փաստերով ցույց տվեց այդ ենթադրության անհիմն լինելը: Հայ առա-

Ն Ա. Բաբայանի ղեկուցումը տպագրվում է «Հանդեսի» այս համարում:

չին տպագրիչի մասին պետք է խոսել միայն իրական պայմանների վրա հիմնվելով, իսկ առայժմ այդ պայմաններն են՝ Հակոբ Մեղապարտի տպագրած և մեզ հասած հինգ գրքերը և նրանցից մեկի փոքր հիշատակարանը՝ հայ առաջին տպագրիչի կենսագրության վերաբերյալ միակ տեղեկությունը։ Ուրշխանյանը, հիմնվելով XVI—XVII դարերի հայ տպագրիչների գործունեության մանրամասն ընկնության վրա, մեկնարանում է Հակոբ Մեղապարտի թողած համառոտ հիշատակարանը։ Զեկուցման մեջ վերլուծված էր նաև Հակոբի հրատարակած գրքերի տպագրական արվեստը։ Գրքերի յուրահատուկ, փոքր-ինչ պրիմիտիվ տպագրությունը, նրանց բարձրորակ սրբագրությունը և մի շարք այլ պոլիգրաֆիական հատկանիշներ ցույց են տալիս, որ այդ գրքերը կարող են տպագրված լինել միայն հայկական տպարանում՝ ժամանակի բարձր գրագիտության տեր մի անձի կողմից, որն անպայման Վենետիկ պետք է եկած լիներ Հայաստանից։ Ռ. Իշխանյանի զեկուցման մեջ բերված փաստական նյութը և եզրակացությունները ուշադրաբար էին հայ առաջին տպագրիչի անձի հետ կապված մի շարք հարցեր ավելի խոր պարզաբանելու տեսակետից։

Ունենդիրները ջերմորեն ընդունեցին Ուկրաինական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների ինստիտուտի գիտական աշխատող Յաբոնյավ Գաշկեիչին, որը նրան էր ժամանել հատկապես հայկական տպագրության 450-ամյակին նվիրված հասարակական մասնակցելու նպատակով։ Յա. Գաշկեիչը տարիների ընթացքում ուսումնասիրել է Ուկրաինայում գոյություն ունեցած հայկական գաղութների կյանքը։ Նրա ուշադրության առարկան է եղել նաև XVIII դարի սկզբում Լվովում հիմնադրված հայկական տպարանի աշխատանքը։ Զեկուցողը ի մի էր բերել այն ամենը, ինչ գրականության մեջ ասված է Լվովի տպարանի և նրա հիմնադիր Հովհաննես Քարմատանենցի մասին։ Այդ տպարանը — նշեց Գաշկեիչը, — Ուկրաինական Միության տերիտորիայում առաջին հայկական տպարանն է եղել Վենետիկի Մխիթարյանների գրատանը աչքի էլ պահվում է 1616 թ. Լվովում տպագրված Սաղմոսարանը։ Դա Քարմատանենցի հրատարակած առաջին գիրքն է։ Բացի այդ, հիշատակություն կա նույն տպարանում լույս տեսած մի բժշկարանի մասին, որը, դժբախտաբար, չի պահպանվել։ Ահա այն ամենը, ինչ մինչև վերջերս հայտնի էր հայկական տպագրության հնագույն կենտրոններից մեկի տված արտագրանքի մասին։ Զե-

կուցողը ունենդիրներին է ներկայացնում հետևյալ հետաքրքրական փաստը. հունգարացի հայագետ Գյուցր վերջերս Հոլանդիայի Լեյդեն քաղաքի համալսարանի գրադարանում գտել է մոտացության մատնված մի գիրք. դա 1618 թ. Լվովի հայկական տպարանում տպագրված հայտատու զփշադերեն մի աղոթագիրք է, որի հիշատակարանում կա տպագրիչ Հովհաննես Քարմատանենցի տնունը։ Այդ գյուտը նոր լույս է սփռում Ուկրաինայի Ուկրաինայում եղած հայկական տպագրության վրա։ Յա. Գաշկեիչը հաստատ համոզմունք է հայտնում, որ Քարմատանենցի հիմնած տպարանում հրատարակվել են նաև ուրիշ գրքեր, որոնք, սակայն, չեն պահպանվել մինչև մեր օրերը։ Զեկուցողը տարբեր պայմաններից բաղած ուրիշ հետաքրքիր տեղեկություններ է բերում XVII դարի 70-ական թվականներին Լվովում մի նոր հայկական տպարան հիմնադրվելու մասին։ Նա համեմատություններ է անում և գուգահեռներ անցկացնում հայ և ուկրաինական հնագույն տպագրությունների միջև։ Թե՛ հայ և թե՛ ուկրաինական գրատպությունը սկիզբ են առել մայր երկրներից. դուրս Զեկուցողը նմանություններ է գտնում նաև Լվովի հայկական տպարանի գրքերի և նույն ժամանակաշրջանում Լվովում տպագրված ուկրաինական հրատարակությունների պոլիգրաֆիական ձևավորման միջև։

Վերջին զեկուցողը՝ տպագիր բաժնի նախկին վարիչ Շուշանիկ Շահնազարյանը խոսեց Հայաստանի հողում հիմնված առաջին տպարանի՝ Էջմիածնի տպարանի գործունեության մինչև այժմ անհայտ մի բանի գրվագների մասին։ Զեկուցողը ունենդիրներին ուշադրությունը ներկայացրեց Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի գահակալության ժամանակաշրջանում տպագրված մի բանի գրքեր, որոնք ծանոթ չլին հայ մատենագիտությանը։ Դրանցից է, օրինակ, 1738 թ. հրատարակված Խորհրդատետրը, որի հրաշալի գարգերը հայ տաղանդավոր գրքանկարիչ Հարություն Էջմիածնեցու գործն են։

Իստի վերջում հանդես եկավ նրանի պետական համալսարանի պրոֆեսոր, բանասիրական գիտ. թեկնածու Վաչե Նալբանդյանը։ Նա հայտարարեց, որ հայկական տպագրության 450-ամյակի առթիվ Համալսարանը Մատենադարանին է նվիրում իր գրադարանի ֆոնդերում պահվող 250 ձեռագիր։

Բ. ԱՆԳՐԵԱՍՅԱՆ

2 Շ. Շահնազարյանի հաղորդումը տպագրվում է «Հանդեսի» այս համարում։

ՍՓՅՈՒՌՔԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ ԵՎԻՐՎԱԾ ԳԵՏԱԿԱՆ ՆԻՍՏ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը 1962 թ. դեկտեմբերի 26—27-ին կազմակերպեց գիտական նիստ՝ նվիրված սփյուռքահայ գրականության հարցերին: Նիստը բացեց ինստիտուտի գիրքկոտոր Գ. Հովհաննիսյանը: Վերջին 40 տարիներին,—ասաց նա,—արտասահմանի հայ առաջավոր մտավորականությունը ստեղծել է բավականին հետաքրքիր ու ինքնատիպ գրականություն, որը մեր ժողովրդի հոգևոր մշակույթի անրակտելի մասն է կազմում: Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը, կոչված լինելով ստեղծելու նաև հայ գրականության համակողմանի գիտական պատմությունը, առաջին րայլերն է անում սփյուռքահայ գրականության պատմության հարցերի ուսումնասիրման բնագավառում: Ներկա նիստը այդ միջոցառումներից մեկն է, որը, անկասկած, խթան կհանդիսանա հետագա մեր աշխատանքների համար:

«Պոլսահայ ժամանակակից գրականությունը» թեմայով ընդարձակ զեկուցում կարդաց «Սովետական գրականություն» հանդեսի խմբագիր Ստ. Կուրտիկյանը: Համառոտակի խոսելով 20—30-ական թվականների պոլսահայ գրականության մասին, նա հանգամանորեն կանգ առավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այնտեղ ստեղծված գրականության վրա, բնութագրեց նրա արդի վիճակը, նշեց հայ պարբերականների դերը գրական նոր ուժերի հայտնաբերման ու նրանց զեղարվեստական վարպետության բարձրացման գործում:

Ֆրանսահայ գրականության լավագույն ներկայացուցիչներից մեկին՝ Լուիզա Ասլանյանի (Հաս) ստեղծագործության մասին զեկուցեց գրականագետ Մելիսե Մանուշյանը: Համառոտակի ներկայացնելով Հասի կյանքի ընդհանուր ուրվագիծը, նա մանրամասն վերլուծում է գրողի վիպակներն ու «Հարցականի ուղիներով» ծավալուն վեպը, ցույց տալիս գրանց զեղարվեստական արժանիքները:

«Սփյուռքահայ առաջադիմական մամուլը» թեմայով սեփական զեկուցեց Մ. Բարլոյանը: Ներկայումս արտասահմանյան տարրեր երկրներում լույս են տեսնում բոլոր ուղղությունների մոտ 100 անուն հայկական պարբերականներ, որոնց ճնշող մասը հրատարակվում է հայրենիքի սիրով տողորված և մայրենի լեզվի ու մշակույթի պահպանության մասնակցությամբ անձնուրաց մարդկանց ջանքերով: Զեկուցողը հիշատակում է բնութագրում է առանձին հայ-

կական գաղթավայրերում հրատարակվող կարեւորագույն պարբերականները, ընդգծում նրանց դերն ու նշանակությունը գաղութին հուզող խնդիրների մեկնաբանման, հայրենիքի հետ կապերի ամրապնդման, նրա նվաճումների մասնաշաղկապման գործում:

Նիստում «Լիրանանի և Սիրիայի հայ գրականությունը հետպատերազմյան տարիներին» թեմայով հանգամանալի զեկուցումով հանդես եկավ Լիրանանից վերջերս հայրենիք վերադարձած գրող Գեղամ Սեանո: Բնութագրելով վերջին 40 տարվա Սփյուռքի հայ գրականության տարրերը շրջանները, նա մանրամասն խոսում է Լիրանանի և Սիրիայի ժամանակակից հայ գրականության մասին, բնորոշում նրա հատկանշական տարրերը, բնութագրում մի շարք գրողների ստեղծագործական ուղին:

Գրականագետ Գ. Տատուրյանի զեկուցումը նվիրված էր ամերիկահայ գրող Բենիամին Նուրիկյանի ստեղծագործությանը: Զեկուցողը բնութագրեց XX դարի սկզբի գրական այն միջավայրը, որտեղ իր ստեղծագործական մեղրությունն է ստացել Բ. Նուրիկյանը, և որն իր արտացոլումն է գտել գրողի մի շարք գործերում: Իր ստեղծագործության մեջ վերաբաղելով արեւմտահայ գյուղի պատկերները, անվանի գրողը թափառական հայ մարդու հողում վառ է պահել սերը դեպի հայրենիքը: Ամերիկահայ կյանքին նվիրված իր ստեղծագործություններում գրողը պատկերում է օտարության մեջ ապրող հայի անհեռանկար առօրյան, նրա աճհրապույր, ծանր կյանքը:

Գրականության ինստիտուտի սովետահայ գրականության սեկտորի վարիչ Մ. Աղաբալյանը «Սփյուռքի գրականությունը և մեր խրնդիրները» թեմայով իր զեկուցման մեջ խոսում է այն մասին, թե հայ գրականությունը ինչպիսի մեծ դարգացում է ապրել մայր հայրենիքում և ինչպիսի բարերար ազդեցություն է ունեցել սփյուռքահայ առաջադեմ գրականության վրա: Զեկուցողը նշում է, որ անհատի պաշտամունքի ժամանակաշրջանում ստեղծված աննպաստ պայմանները խոչընդոտել են հայրենիքի և սփյուռքի կապերի ամրապնդմանը, թույլ չեն տվել սփյուռքահայ գրականությունը ներկայացնել իր ամբողջ հարստությամբ: Բայց, այնուամենայնիվ, դարգացել են գրական հարստությունները, որոնք ներկայումս լայն չափեր են ստանում: Այժմ հրատապ է դարձել արտասահմանյան հայ գրականությունը ավելի խորությամբ ու մարքսիստական մեթոդով դիտելով լուսաբանելու խնդիրը:

ՄԵԾԱՐՄԱՆ ՆՇԱՆ

Լրացավ ականավոր հայագետ, Հայկական ՍՍԽ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կարապետ Մելիք-Օհանջանյանի ծննդյան 70-և գիտական գործունեության 50-ամյակը։ Իյուսերի զաւրիւսում 1963 թ. մարտի 12-ին տեղի ունեցավ մեծարժան երեկո, որին մասնակցեցին նրանի գիտական հասարակացութեան բաղմաթիւ ներկայացուցիչներ։ Մատենադարանի գիրեկտոր Լ. Խաչիկեանի բաղման խոսքից հետո պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանի կյանքի և գիտական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ բանասեր Ա. Հանալանյանը։ Հանդամանորեն վերլուծելով Կ. Մելիք-Օհանջանյանի բաղմամյա ու բեղմնավոր մանկավարժական-հասարակական, գիտա-վարչական ու գիտա-ստեղծագործական կյանքի տարեգրութեանը, զեկուցողը առանձնապես նշեց նրա մեծ ծառայութեանը հայ ժողովրդական Լպոսի «Սասունցի Գալիլի» տարբերակների հայտնադործման, Լպոսի համահավաք բնագրի մշակման ու տպագրութեան շնորհակալ գործում։ Պրոֆ. Մելիք-Օհանջանյանի բանագիտական, աղբյուրագիտական ու գրականագիտական բաղմաթիւ աշխատութեանը, մասնավորապես «Ֆիրդոսին և Իրանի վիպական մոտիվները» (1934), «Լենինի ֆուկլորի մեջ» (1936), «Միլի-րա-Միհր Մասնա ծոերի մեջ» (1946), «Տի-րան-Տրդատի վեպը բոտ Փափստոս Բուղանդի» (1947), Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմութեան» քննական-համեմատական բնագիրը (1961) և այլն, կարեոր ներգրում են հայագիտութեան մեջ։

Հատկապես մեծ է նրա վաստակը Սովետական Հայաստանի հայագիտական մի շարք հիմնարկութեանների ստեղծման ու զեկավարութեան, գիտական կադրերի պատրաստման գործում։

Պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանին ծննդյան 70-և գիտական գործունեության 50-ամյակի առթիւ ջերմորեն ողջունեցին Հայկական ՍՍԽ ԳԱ ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը (Հայկ. ՍՍԽ ԳԱ հասարակագիտական բաժանմունքի կողմից), պրոֆ. Ն. Տեր-Մինասյանը (Էդգի ինստիտուտ), գիտության վաստակավոր գործիչ Խ. Սարգսյանը (Մ. Կրեկյանի անվան գրականութեան ինստիտուտ), Հայկական ՍՍԽ ԳԱ ակադեմիկոս Ս. Նրեմյանը (պատմութեան ինստիտուտ), արվեստագիտութեան զեկտոր Խ. Զարյանը (արվեստի ինստիտուտ), Է. Պիվաղյանը (Պետական համալսարան), Հայկական ՍՍԽ ԳԱ թղթակից-անդամ Մ. Հասրաթյանը (Խ. Արովյանի անվ. մանկավարժական ինստիտուտ), Ա. Նաղինյանը (հնագիտութեան և աղբյուրութեան ինստիտուտ), Հ. Բնճիկյանը (արեկագիտութեան սեկտոր), Հաջի Զնդին (արեկագիտութեան սեկտորի քրդագիտական խումը և Գրողների միութեան քրդական սեկցիա), Վ. Նորենցը (Գրողների միութեան), Վ. Գալիլյանը («Գրական թերթ» և «Սովետական գրականութեան»), Ի. Ստեփանյանը (գրականութեան և արվեստի թանգարան), Ն. Ավաղյանը (պատմութեան թանգարան), Գ. Արդարյանը (Մատենադարան), Ս. Հալաֆարյանը (Մատենադարանի բնագրագիտական սեկտոր), պրոֆ. Խ. Հովհաննիսյանը (հորեկյարի աշակերտների կողմից)։ Վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ հորեկյարը։

Վ. Գ.

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՊԱՐԵՐԱԿԱՆ

Փարիզից մեկ հայտնում են, որ 1963 թ. վերակազմելու է «Revue des Etudes Armeniennes» հայագիտական հանդեսի հրատարակութեանը (հանդեսը հիմնադրվել էր Ա. Մելիքի և Յ. Մակկերի կողմից 1920 թ. և տպագրվում էր մինչև 1933 թ.)։ Պարբերականի խմբագրական կոլեկիայի մեջ մտնում են հայտնի հայագետներ Ե. Բենվենիստը, Գ. Կահենը, Մ. Կանարը, Ժ. Դյումեզիլը, Ա. Դյուպոն-Սոմենը, Յ. Յեյզին, Ա. Գրարարը, Պ. Լեմերը, Շ. Մերսին, Ա. Միրամբերը և Լ. Սորերը։ Գլխավոր խմբագիրն է Ն. Բենվենիստը, խմբագրութեան բաղմաթիւը՝ Հայկ Բերբերյանը։

Հանդեսում լուսաբանվելու են լեզվաբանութեան, բանասիրութեան, պատմութեան, հնագիտութեան, սոցիոլոգիայի և էթնոգրաֆիայի պրոբլեմները, ինչպես նաև հայ ժողովրդի կուլտուրական կապերը հարեան ժողովուրդների հետ։ Հատուկ տեղ է հատկացվելու Սովետական Հայաստանում հայագիտութեան զծով լույս տեսած աշխատութեանը, որոնք անծանոթ են մնացել արեմուտքի գիտնականներին։

Ենթադրվում է, որ նոր պարբերականի առաջին հատորը լույս կտեսնի աշտ տարվա աշնանը։